ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2 դեկտեմբերի 2011թ. թիվ 597

Կ.ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ 2010Թ. ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԵՎ 2011Թ. ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158, 159 հոդվածների, 167 հոդվածի 3-րդ կետի, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2010թ. նոյեմբերի 26-ի թիվ 445 կարգադրությունը և Կ.Ավանեսյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Կիմ Ավանեսյանին տրամադրել 2010 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը ս/թ դեկտեմբերի 5-ից 30-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

2. «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Կիմ Ավանեսյանի 2011 թվականի ամենամյա արձակուրդը տեղափոխել 2012 թվականի աշխատանքային տարի:

3. Կ.Ավանեսյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «Կուրթանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Ջուլիետա Բրուտյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2011թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր